

7-46

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՏԱԹԵՎԻԿ ԳԱԳԻԿ ԴԱՐԻՔՅԱՆ**

**ԻՔՆ ԱԲԴ ՈՎԲԲԻՀԻԻ «ԲԱՅԱՌԻԿ ՎՋՆՈՅԸ» ՈՐՊԵՍ ՄԻՋՆԱՂԱՐՅԱՆ  
ԱՐԱՔԱՄՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿՈԹՈՂ**

**Ժ.01.07 - «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2015**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների թեկնածու,  
պրոֆեսոր ԴԱՎԻԹ ԱՐՏԱՇԵՍԻ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈԶՄՈՅԻ ԿՈԶՄՈՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ ԼԻԼԻԹ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՍԱՖՐԱՍՅԱՆ


Առաջատար կազմակերպություն՝  
Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015թ. մարտի 20-ին՝ ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՂ-ի Հայ և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում: (Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ.-ի փետրվարի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
բանասիրական գիտությունների թեկնածու՝

 Ս. Ա. Մարգարյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

7-րդ դարի առաջին կեսին Արաբական թերակղզում առաջացած իսլամը ժամանակի ընթացքում հաստատվեց նաև Իբերական թերակղզում: Աբբասյան խալիֆների<sup>1</sup> կողմից գահընկեց արված Օմայյան խալիֆներից<sup>2</sup> սերող Աբդ ալ-Ռահմանը, օգտվելով Անդալուսի<sup>3</sup> խալիֆայության կենտրոնից հեռու գտնվելուց և քաղաքական մեկուսացվածությունից, 8-րդ դարի կեսին Անդալուսում հիմնեց Կորդովայի Օմայյան էմիրների հարստությունը և անկախ էմիրությունը: Անդալուսի ղեկավարները միշտ ձգտում էին անադարտ պահել Մաշրիկի<sup>4</sup> ավանդույթը, արաբական գրականության և արաբերեն լեզվի դիրքերը, քանի որ արաբներն Անդալուսում մշտապես կազմել են բնակչության փոքրամասնությունը: Անհրաժեշտ էր անրապնդել արևելյան ավանդույթի դիրքերը, դրան գերակայող դիրք հաղորդել, ինչպես նաև այդ ներմուծվող համակարգին՝ որպես իշխողների մշակույթ, հարկավոր էր հաղորդել կենսական կարևորության հնչեղություն:

Նման պատմական և սոցիալ-քաղաքական հանգամանքները դրդում են Անդալուսի Օմայյաններին ծառայող մշակույթի գործիչ Իբն Աբդ Ռաբբիհին ստեղծել «Բացառիկ վզնվոց» (العقد الفريد /Al-'Ikd al-farīd) մեծածավալ աշխատությունը մի գրավոր հուշարձան, որը նպաստեց վերոհիշյալ նպատակների իրագործմանը՝ ծանոթացնելով Անդալուսի բնակչությանն արաբների պատմամշակութային և հոգևոր ակունքներին:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն աշխատանքը նվիրված է արաբական գրականության մեջ ուրույն տեղ զբաղեցնող աղաթի գրականությանը, այդ գրականության լավագույն վարպետներից մեկի համբավը վայելող անդալուսցի Իբն Աբդ Ռաբբիհին (860-940) և նրա «Բացառիկ վզնվոց»<sup>5</sup> ստեղծագործությանը,

<sup>1</sup> Մուհամմադ մարգարեի հորեղբայր ալ-Աբբաս իբն Աբդ ալ-Մուտալիբ իբն Հաշիմից սերող խալիֆների երկրորդ հարստություն (750-1258):

<sup>2</sup> Մուհամմադ մարգարեի պապի Աբդ ալ-Մուտալիբի հորեղբորից սերող խալիֆների առաջին հարստություն (661-750):

<sup>3</sup> Արաբներն «Անդալուս» էին անվանում Իբերական թերակղզին, որի մեծ մասը նվաճեցին 8-րդ դարի սկզբին դարձնելով այն Արաբական խալիֆայության նահանգը:

<sup>4</sup> Արաբ պատմաբանները և աշխարհագրագետներն օգտագործում էին «Մաշրիկ» եզրույթը նշելու Արաբական աշխարհի Եգիպտոսից արևելք գտնվող տարածքները, իսկ «Մաղրիբ» եզրույթը նշելու Եգիպտոսից արևմուտք գտնվող տարածքները ընդգրկելով Տրիպոլիտանիան, Թունիսը, Ալժիրը և Մարոկկոն: Աշխարհագրագետ ալ-Մուկադդասին (946-991) Մաղրիբի մեջ ընդգրկում էր նաև Անդալուսը: Miquel A., Mashrik, *Encyclopaedia of Islam*, Leiden, 1991, v. 6, pg. 720, Yver G., Maghrib, *Encyclopaedia of Islam*, Leiden, 1986, v. 5, pg. 1183

<sup>5</sup> Սեղմագրում այսուհետ կնշվի «Ալ-Իկր»:



որն ադաբի գրականության դասական մնուչ է: Ադաբի գրականությունը բխում է իսլամի բարոյաէթիկական պատկերացումների վրա հիմնված ադաբի հայեցակարգից, որի զարգացումը մեծ ազդեցություն ունեցավ արաբամուսուլմանական մշակույթի ձևավորման գործում արտացոլելով խալիֆայության հասարակական կյանքի աշխարհիկ կողմը: Ադաբի թեման կարևոր է նրանով, որ այն ձևավորում է աշխարհայացք արտացոլելով արաբամուսուլմանական հասարակության համար ճիշտ սարելակերպի ուղեցույց հանդիսացող բարոյական և սոցիալական նորմերը, որոնց ուսումնասիրումն օգնում է ըմբռնել այն արժեքները, որոնց վրա պետք է հիմնվի մարդկանց միջև հարաբերությունների մոդելը:

Ադաբի գրականության ուսումնասիրման արդիականությունը պայմանավորված է նրանով, որ այն կարևոր դեր էր կատարում արաբամուսուլմանական հասարակության սոցիալ-մշակութային փորձի, բարոյաէթիկական նորմերի, սոցիալական վարքագծի, ավանդույթների փոխանցման համակարգում: «Ալ-Իկդի» հետազոտումն օգնում է վեր հանել ադաբի գրականության խնդիրները, նպատակները և ընդգրկումը. ադաբի գրականությունը զերազանցապես կոչված էր մուսուլմանին հաղորդել գիտելիքների համապարփակ համակարգ, որը դարձնում է նրան բարեկիրք և ուսյալ՝ ապահովելով նրա հոգևոր բարձր կուլտուրան, ինչպես նաև կրթել և խրատել իսլամի բարոյաէթիկական պատկերացումներին համապատասխան դաստիարակելով նրան որպես իդեալական մուսուլման ադիբ: «Ալ-Իկդի» ուսումնասիրումը կարևոր է նրանով, որ այն նախաիսլամական և իսլամի շրջանի պատմամշակութային և հոգևոր ժառանգության հարստագույն աղբյուր է, որում շոշափվում են քաղաքական և պատմական, գիտական և գրական հարցեր: «Ալ-Իկդի» արտացոլում է միջնադարյան արաբամուսուլմանական հասարակության արժեքային համակարգը, հիմնական բարոյաէթիկական նորմերը օգնելով «ճանաչել» մուսուլմանական աշխարհը: Հեղինակի կողմից «Ալ-Իկդիում» արծարծված հարցերը մուսուլմանների վերաբերմունքն Ալլահին, Մաուհամմադ մարգարեին, մուսուլմանների հարաբերությունները միմյանց հետ, այլադավանների հետ, այսօր էլ արդիական են:

#### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՍԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն աշխատանքի նպատակն արաբամուսուլմանական գրավոր մշակույթի համատեքստում Իբն Աբդ Ռաբբիհիի «Ալ-Իկդի» ուսումնասիրությունն է, դրա վերլուծությունը, տեղակայումը ադաբի գրականության ստեղծագործությունների շարքում: Այդ նպատակով անհրաժեշտ ենք համարել դիտարկել ադաբի գրականությունը, հատկապես դրա այն գծերը, որոնց առկայությունն «Ալ-Իկդիում» թույլ է տալիս այն դասել ադաբի գրականության ստեղծագործությունների շարքում:

Հեղինակի դարաշրջանի ինտելեկտուալ էությունն ամբողջական ըմբռնելու և «Ալ-Իկդի» հնարավոր ճշգրտությամբ վերլուծելու համար անհրաժեշտ ենք համարել անդրադառնալ նրա կյանքին և իր դարաշրջանին դիտելով «Ալ-Իկդի» դրանց համատեքստում, ինչը նպաստում է Իբն Աբդ Ռաբբիհիի կողմից «Ալ-Իկդի» ստեղծելու դրդապատճառների, նպատակների, ինչպես նաև դարաշրջանի հոգուց

բխող հարցերին նրա կողմից տրված պատասխանների և քարոզած արժեքների առավել խորքային ընկալմանը:

Վերոհիշյալ նպատակներն իրագործելու համար սույն աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. դիտարկել ադաբի հայեցակարգը ներկայացնելով դրա բովանդակությունը,

2. դիտարկել ադաբի հայեցակարգից բխող ադաբի գրականությունը դրա առջև ծառայած խնդիրներով և նպատակներով ներկայացնելով դիտարկվող ժամանակաշրջանին վերաբերող ադաբի գրականության հիմնական հեղինակներին և նրանց ստեղծագործությունները,

3. տալ «Ալ-Իկդի» աղբյուրագիտական նկարագիրը,

4. դիտարկել միջնադարյան արաբամուսուլմանական գրավոր մշակույթի այն կոթողները, որոնք հիմնական աղբյուր են հանդիսացել «Ալ-Իկդի» համար,

5. պատկերացում ձևավորել այն պատմաաշխարհագրական և ժամանակային, ինչպես նաև գրական և մշակութային միջավայրերի մասին, որոնցում ստեղծվել է «Ալ-Իկդի»,

6. կատարել տեքստի կառուցվածքային, ինչպես նաև բովանդակային վերլուծություն,

7. դիտարկել աղբյուրի տեքստաբանական առանձնահատկությունները,

8. «Ալ-Իկդի» օրինակի հիման վրա վեր հանել ադաբի հիմքն ու ակունքները, ընդգրկումը և նպատակները:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

«Ալ-Իկդի» ստեղծման ժամանակաշրջանի առումով թեզում հիմնականում ներկայացված է Իբն Աբդ Ռաբբիհիի կյանքին և գործունեությանը վերաբերող ժամանակահատվածը՝ 9-րդ դարի կեսից 10-րդ դարի կեսը: Մինևույն ժամանակ, ելնելով թեզում արծարծված խնդիրները հնարավորինս ամփոփ հիմնավորելու և լուսաբանելու անհրաժեշտությունից, անդրադարձ է կատարված նաև նախաիսլամական և իսլամի վաղ շրջաններին, ինչպես նաև հեղինակի կյանքին և գործունեությանը հաջորդող ժամանակահատվածին, որոնց մեջբերումը պահանջում են նյութի տրամաբանությունը, ժամանակի մշակույթին և գրականությանը վերաբերող իրողությունների հիշատակումը:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ալ-Իկդի» աղբյուրագիտական նկարագրությունը կնպաստի այս կոթողի գիտական շրջանառության մեջ մտնելուն, ինչը կարևոր է, քանի որ այն արաբամուսուլմանական գրավոր մշակույթի կարևորագույն աղբյուրներից մեկն է: Ատենախոսության վերլուծական և փաստագրական նյութերը, ինչպես նաև աղբյուրի ուսումնասիրության ընթացքում ի հայտ բերված կառուցվածքային, բովանդակային և տեքստաբանական սկզբունքները կարող են հիմք ծառայել միջնադարյան արաբական գրավոր



հուշարձանների ուսումնասիրության համար: Աստեմատության հիմնական հարցադրումներն ու եզրահանգումները կարող են օգտագործվել արաբագիտության ոլորտում կատարվող համապատասխան ուսումնասիրություններում:

### ՆՅՈՒԹԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Իր ստեղծումից ի վեր իբն Աբդ Ռաբբիհիի «Ալ-Իկդը» գրական փառք է վայելել: Միջնադարից սկսած գրեթե միշտ առկա է եղել հետաքրքրությունը «Ալ-Իկդի» նկատմամբ որպես նախախլամական և իսլամի շրջանի պատմաճակտության և հոգևոր ժառանգության հարստագույն աղբյուրի: «Ալ-Իկդն» այնպիսի համբավ է վայելել, որ իբն Աբդ Ռաբբիհիին և «Ալ-Իկդին» անդրադարձ են կատարել Մաշրիկում և Մադրիդում, ինչպես նաև Անդալուսում ստեղծագործող միջնադարյան մուսուլմանական գրական-գիտական մտքի գրեթե բոլոր հայտնի գործիչներն, ինչպիսիք են իբն ալ-Ֆառադին (962-1012), ալ-Յունեյդին (1029-1095), իբն իսկանը (1087-1134), Յակուբը (1180-1229), իբն իսալիբանը (1211-1282), ալ-Սուլուտին (1445-1505), ալ-Մակարին (1578-1632):

19-րդ դարում Արևելքում իբն Աբդ Ռաբբիհիի և «Ալ-Իկդի» նկատմամբ չնվազող հետաքրքրության մասին է վկայում գրքի հրատարակությունների հաճախականությունը<sup>6</sup> ժամանակի հայտնի արաբ գիտնականների հեղինակին և ստեղծագործության բնույթին վերաբերող կից նախաբաններով:

«Ալ-Իկդին» անդրադարձել են թե՛ Արևելքի, թե՛ Արևմուտքի գիտնականները: «Ալ-Իկդը» որպես արաբների նախախլամական շրջանի պատմության և մշակույթի աղբյուր, դեռ 19-րդ դարում է գրավել եվրոպացի ուսումնասիրողների ուշադրությունը: Արաբալեզու հեղինակների գործերից արաբների նախախլամական շրջանի պատմությանը վերաբերող ֆրանսերեն կատարված թարգմանությունների շարքում (Lettres sur l'histoire des Arabes avant l'islamisme, Paris, 1836-1838) ֆրանսիացի արաբագետ Ֆ.Ֆուրնելի կողմից ներկայացվել են նաև «Ալ-Իկդի» համապատասխան բաժինները: Ինչպես նաև իբն Աբդ Ռաբբիհիին և «Ալ-Իկդին» անդրադարձել է պատմաբան Ֆ.Պոնս Բոյգուեն (1861-1899)<sup>7</sup>:

20-րդ դարի գրեթե բոլոր խոշոր գիտնականներն անդրադարձել են «Ալ-Իկդին»: Արևմտյան ուսումնասիրողներից Ռ.Նիքոլսոնը (1868-1945) իբն Աբդ Ռաբբիհիին ներկայացրել է որպես արաբական գրականության պատմության մեջ «Ալ-Իկդով» մեծ ավանդ ունեցող գրող<sup>8</sup>: Ականավոր գիտնական Կ.Բրոքելմանը (1868-1956), անդրադառնալով «Ալ-Իկդին», այն բնութագրել է որպես տեղեկացված մարդու համար օգտակար գիտելիքի հանրագիտարան, որում քիչ թե՛ շատ հաջողվել է համակարգված ձևով դասակարգել այն գաղափարները, որոնք կազմում են համընդհանուր

<sup>6</sup> Եգիպտոսում հրատարակվել է 1875, 1885, 1888, 1894 թվականներին:

<sup>7</sup> Pons Boigues F., Ensayo bio-bibliografico sobre los historiadores y geografos arabigo-espanoles, Madrid, 1898, pg. 51-57

<sup>8</sup> Nicholson R., A Literary History of the Arabs, London, 1907, pg. 347

մշակույթը<sup>9</sup>: Հայտնի արաբագետ Պ.Կակիան (ծնվ. 1921) «Ալ-Իկդը» բնութագրում է որպես «գրական գանձարան»<sup>10</sup>: Եվրոպացի գիտնականներից իբն Աբդ Ռաբբիհիին անդրադարձել են նաև Ա.Գոնսալես Պալենսիան (1889-1949)<sup>11</sup> և Է.Լեյվի-Պրովանսալը (1894-1956)<sup>12</sup>:

Ինչ վերաբերում է «Ալ-Իկդին» անդրադարձ կատարած 20-րդ դարի արաբ գիտնականներին, ապա կառանձնացնենք լիբանանցի հայտնի պատմաբան և գրականագետ Աֆրամ ալ-Բուսթանիին (1904-1994), ով արաբական գրականության հատրնտիրում գլուխ է հատկացրել իբն Աբդ Ռաբբիհիին, և լիբանանցի գիտնական Ս.Ջաբբուրին ( سليمان جبور, ابن عبد ربه و عفته, بيروت, 600): Վերոնշյալ անդրադարձները նկարագրողական բնույթի են և խոր վերլուծություն չեն պարունակում:

Խորհրդային արևելագիտության մեջ իբն Աբդ Ռաբբիհիին և «Ալ-Իկդին» անդրադարձ կատարած գիտնականներից կարելի է առանձնացնել Բ.Շիդֆարին (1928-1993)<sup>13</sup>, ով հակիրճ վերլուծել է «Ալ-Իկդի» մի շարք բովանդակային, կառուցվածքային և ոճաբանական հարցեր: Թվարկված մյուս անդրադարձները ծանոթագրական բնույթի են կամ հայանցիկ են, ներկայացվել է, թե «Ալ-Իկդն» ինչ բնույթի աշխատություն է և ինչ թեմաներին է առնչվում: Վերոհիշյալ ուսումնասիրողները ոչ թե վերլուծել են ստեղծագործությունը, այլ անդրադարձել են «Ալ-Իկդին» այլ հարցերի առնչությամբ որպես տեղեկության աղբյուր, ինչի արդյունքում «Ալ-Իկդը» մինչ այժմ չի դրվել գիտական շրջանառության մեջ ո՛չ աղբյուրագիտական և ո՛չ էլ տեքստաբանական տեսանկյուններից:

Հայ արևելագիտության մեջ իբն Աբդ Ռաբբիհիին և «Ալ-Իկդին» նվիրված որևէ անդրադարձ գոյություն չունի:

Իբն Աբդ Ռաբբիհիի պոեզիայից և «Ալ-Իկդից» անգլերեն թարգմանություններ են կատարել բրիտանացի երաժշտագետ Գ.Ֆարմերը «Ալ-Իկդի» երաժշտությանը վերաբերող գլխից<sup>14</sup>, արաբ ուսումնասիրող Ս.Ջայյուսին (ծնվ. 1927), ով անդրադարձել է նրա պոեզիային

<sup>9</sup> Brockelmann C., Ibn Abd Rabbih, *Encyclopaedia of Islam*, Leiden-London, 1986, v. 3, pg. 676, *Geschichte der Arabischen Literatur*, Leiden, 1943, v. 1, pg.161

<sup>10</sup> Уотт У., Какиа П., Мусульманская Испания, М., 1976, стр. 76, Cachia P., *Andalusi Belles-Lettres, The legacy of Muslim Spain*, ed. by Jayyusi S., Leiden, 1992, pg. 310

<sup>11</sup> Gonzalez Palencia A., *Historia de la Literatura Arabigo-espanola*, Barcelona, 1928, pg. 127

<sup>12</sup> Levi-Provençal E., *Histoire de l'Espagne Musulmane*, Paris-Leyden, 1953, v.3, pg. 492-493

<sup>13</sup> Шифдар Б., *Андалусская литература*, М., 1970, стр.36-57

<sup>14</sup> Farmer G., *A History of Arabian Music*, London, 1929, *Music: the Priceless Jewel, Collection of Oriental writers on music*, ed. By Farmer G., Bearsden, Scotland, 1942



թարգմանաբար ներկայացնելով դրանից հատվածներ<sup>15</sup>: Ռուսերեն հատվածային թարգմանություններ է կատարել Բ.Շիդֆարը<sup>16</sup>:

Յետագոտության ընթացքում հեղինակի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրության համար միջնադարյան աղբյուրներից հիմք են ծառայել Իբն Խականի<sup>17</sup>, ալ-Յունեյդիի<sup>18</sup>, ալ-Սաալիբիի<sup>19</sup>, ալ-Ֆառադիի<sup>20</sup>, ալ-Մակարիի<sup>21</sup> միջնադարյան արաբանուսուլմանական գրական-գիտական մտքի ականավոր ներկայացուցիչներին նվիրված աշխատություններում Իբն Աբդ Ռաբբիիի վերաբերյալ առկա տեքստերը կամ նրանց հաղորդած տեղեկությունները:

Ատենախոսության թեմայի ուսումնասիրության ընթացքում ուղենշային դեր են կատարել Բ.Շիդֆարի «Անդալուսյան գրականություն» գրքում (Андалусская литература, М., 1970) Իբն Աբդ Ռաբբիիի և «Ալ-Իկդի» մասին տեղ գտած բաժինը, Կ.Բրոքելմանի համապատասխան հոդվածն իսլամի հանրագիտարանից (Ibn Abd Rabbih, Encyclopaedia of Islam, Leiden-London, 1986, v. 3): Օգտագործվել են նաև Կահիրեում հրատարակված «Ալ-Իկդի» կից եզիպտացի գրող Մուհամմադ Սաիդ ալ-Արյանի նախաբանը ( . -ج . 620 . القاهرة . العقد الفريد . ابن عبد ربه , «Ալ-Իկդի» տեքստին կից լիբանանցի ուսումնասիրող Մուֆիդ Մուհամմադ Կամիայի նախաբանը ( . -ج . 650 . بيروت . العقد الفريد . ابن عبد ربه ) : Յետագոտության ընթացքում օգտագործվել է «Ալ-Իկդի» Կահիրեում հրատարակված օրինակը ( . 632 - 616 . -ج . 4 . القاهرة . العقد الفريد . ابن عبد ربه ) եզիպտացի գիտնական Ահմադ Ամինի կողմից գրված դրան կից նախաբանով:

Ղիտարկվող ժամանակահատվածին վերաբերող ուսումնասիրություններից օգտագործվել են Ի.Կրաչկովսկիի<sup>22</sup>, Ռ.Լանդայի<sup>23</sup>, Ռ.Ուոթի և Պ.Կակիայի<sup>24</sup>, Է.Լեյվի-Պրովանսալի<sup>25</sup>, Ա.Աբելի<sup>26</sup>, Ֆ.Յիթթի<sup>27</sup>, Ա.Կաստրոյի<sup>28</sup>, Ս.Իմամուդդինի<sup>29</sup>, Ա.Սիրանդայի<sup>30</sup>, Ջ.Սսիթի<sup>31</sup>,

<sup>15</sup> Jayyusi S., Andalusí Poetry: the Golden Period, *The legacy of Muslim Spain*, Leiden, 1994, pg. 328-330

<sup>16</sup> Ибн Абд Раббихи, Чудесное ожерелье, перевод, М., 1985

<sup>17</sup> ابن خاقان , مطح الأفس ومسرح التانس في ملح أهل الأندلس, قسطنطينية, 551 . ص- 2 .

<sup>18</sup> الحميدي , جذوة المقتبس , تونس , 5 -- / - ص- 2 .

<sup>19</sup> الثعالبي , يتيمة الدهر , القاهرة , 623 . مج- / - ص- 5 .

<sup>20</sup> ابن الفرصي , تاريخ علماء الاندلس , مادريد . 56 . مج- . ص- 04 .

<sup>21</sup> المقرئ , نفع الطيب , بيروت , 655 . مج - 4 - ص- 3 .

<sup>22</sup> Крачковский И., Арабская культура в Испании, М-Л., 1937

<sup>23</sup> Ланда Р., Общность культурных традиций Магриба и арабо-мавританской Андалусии, в кн. *Проблемы арабской культуры*, М., 1987

<sup>24</sup> Уотт У., Какиа П., նշվ. աշխ.

<sup>25</sup> Levi-Provencal E., նշվ. աշխ.

<sup>26</sup> Abel A., Muslim Spain. Unity and Variety of Muslim Civilization, Chicago, 1955

<sup>27</sup> Hitti P. History of the Arabs, London. 1951

<sup>28</sup> Castro A., The Structure of Spanish History, Princeton, 1954

<sup>29</sup> Imamuddin S., Muslim Spain: 711-1492 A.D., Leiden, 1965

<sup>30</sup> Miranda A., The Iberian Peninsula and Sicily, The Cambridge History of Islam, London, 2003, v. 2A

Ս.Ջայյուսիի<sup>32</sup> և այլ գիտնականների աշխատությունները, որոնցում ներկայացված են 9-10-րդ դարերում Անդալուսում տեղի ունեցող գործընթացները կրոնաքաղաքական, սոցիալական, մշակութային և գիտական ոլորտներում:

### ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՅԻՄՔԸ

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքում ընկած է ժամանակագրական մակարդակում տեքստի կառուցվածքային և բովանդակային վերլուծության, պատմահամեմատական վերլուծության սկզբունքները: Բոլոր խնդիրները լուսաբանվել են, հիմնվելով ժամանակակից գիտական հետազոտությունների, հնչայես նաև ղիտարկվող և քննության առնվող խնդիրների վերաբերյալ հայտնի արևելագետների թողած ժառանգության հիման վրա և անկախ ուսումնասիրության ոգով:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Սույն ատենախոսությունում առաջին անգամ Իբն Աբդ Ռաբբիիի «Ալ-Իկդի» ներկայացվել է համակողմանիորեն և ամփոփ ձևով: Մանրամասն հետազոտվել է «Ալ-Իկդի» ամբողջ տեքստը մի շարք կտրվածքներով. աշխատանքում տրվել է «Ալ-Իկդի» աղբյուրագիտական նկարագիրը, ներկայացվել են պատմաաշխարհագրական և ժամանակային, բաղաբանական և մշակութային գործոնների ազդեցությունը հեղինակի դիրքորոշման վրա, կատարվել է տեքստի կառուցվածքային վերլուծությունը, քննության են առնվել «Ալ-Իկդի» տեքստաբանական առանձնահատկությունները ըստ կիրառված սկզբունքների, մանրամասն հետազոտվել է բովանդակային ընդգրկումը՝ ներկայացնելով բոլոր 25 գլուխներից յուրաքանչյուրում արծարծված թեմաները և գաղափարները, որոնց քննության արդյունքում ի հայտ են բերվել աղաքի հիմքն ու ակունքները, ընդգրկումը և նպատակները: Բոլոր գլուխներից առաջին անգամ կատարվել են հատվածային թարգմանություններ հայերեն:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացությունից, հավելվածից և օգտագործված գրականության ցանկից:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի հիմնական դրույթները ներկայացված են Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի կողմից հրատարակվող «Արաբագիտական ուսումնասիրություններ» և «Արևելագիտության հարցեր» ժողովածուներում: Ատենախոսությունը

<sup>31</sup> Smith J., Islam and Christendom, The Oxford History of Islam, 1999

<sup>32</sup> Jayyusi S. (ed.), The legacy of Muslim Spain, Leiden, 1992



քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի նիստում:

#### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորվում են հետազոտության արդիականությունը և գիտական նորույթը, ներկայացվում են աշխատանքի նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական հիմքը և կիրառական նշանակությունը:

#### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

«ԱՆԴԱԼՈՒՍԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 9-10-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ»

**Առաջին գլուխը** բաղկացած է 5 բաժնից: **Առաջին բաժնում «Անդալուսի սոցիալ-քաղաքական իրավիճակը 9-10-րդ դարերում»**, անդրադարձ է կատարվել այն ժամանակաշրջանի զարգացումներին, որի ընթացքում ապրել և ստեղծագործել է Իբն Աբդ Ռաբբիհին: Նրա կյանքի և գործունեության մի մասը համընկնում է Անդալուսի խալիֆ Աբդ ալ-Ռահման 3-րդի կառավարման տարիների հետ, ուն անվան հետ է կապված երկրի քաղաքական և մշակութային անախադեպ վերելքի սկիզբը: Ընդհանուր պատկերացում է տրվել Անդալուսի հասարակական և քաղաքական կյանքի մասին:

**Երկրորդ բաժնում «Անդալուսի մշակույթի զարգացման հիմնական ուղղությունները»**, ներկայացվել են Անդալուսի մշակութային կյանքի առանձնահատկությունները, որոնց լույսի ներքո դիտարկվել է Իբն Աբդ Ռաբբիհի գործունեությունը: Մշակութային կյանքի զարգացման ուղղությունը թելադրող ազդակները բխում էին Անդալուսի բնակչության փոքրամասնությունը կազմող արաբներից: Մաշրիկից Անդալուս եկած մշակույթի գործիչներն իրենց հետ բերում են Մաշրիկի ժառանգությունը և ավանդույթը, որը ժամանակի ընթացքում հաստատվում և ամրապնդվում է Անդալուսում: Մյուս կողմից Անդալուսն անընդհատ ու անմիջական շփման մեջ էր գտնվում քրիստոնյաների հետ ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս քրիստոնյա աշխարհի հետ, ինչի հետևանքով տարբեր մշակութային ավանդույթների միջև փոխազդեցություն էր տեղի ունենում, որի արդյունքում 10-րդ դարից սկսած Անդալուսի մշակույթը սկսում է դրսևորել ինքնատիպ գծեր:

**Երրորդ բաժնում «Անդալուսի գրականության զարգացման փուլերը»**, ուրվագծվել են անդալուսյան գրականության զարգացման փուլերը և դրանց առանձնահատուկ գծերը Անդալուսում տիրող սոցիալ-քաղաքական և մշակութային մթնոլորտի համատեքստում: Որոշվել է «Ալ-Իկդի» տեղը այդ փուլերում: Անդալուսյան գրականությունը ձևավորվում է Մաշրիկի ավանդույթի ազդեցությամբ, ինչը զգացվում էր և՛ պոեզիայում, և՛ պրոզայում: Անդրադարձ է կատարվել Անդալուսի մշակութային խառնարանի ընդերքում տեղի ունեցող խնդրումների ազդեցությանը գրականության զարգացման վրա: Դրա արդյունքում Մաշրիկից «ներմուծված» և Մաշրիկի գրական կանոնի շրջանակներում զարգացող գրականության կողքին

ծնվում է ժողովրդական գրականությունը, որին դիմում էին անգամ Մաշրիկի գրականության ավանդույթի շրջանակներում ստեղծագործողները:

**Չորրորդ բաժնում «Արաբական արձակի ժանրային համակարգը 9-10-րդ դարերում»**, անդրադարձ է կատարվել միջնադարյան արաբանուսումնական մշակույթի վերելքի ժամանակաշրջանի արձակին: Արձակի ժանրային համակարգը զգալի հարստացվել է ադաբի հիմնարար գաղափարների գրավոր դրսևորման գործընթացի հետևանքով: Լայն տարածում ստանալով արաբանուսումնական մշակույթի վերելքի ժամանակաշրջանում՝ ադաբի գրականությունը Բ.Շիդֆարի բնորոշմամբ դառնում է «ճաղկունքի ժամանակաշրջանի գրականության հիմնական ժանրը»<sup>33</sup>.

**Հինգերորդ բաժնի՝ «Ադաբի գրականություն»,** բաղկացած է չորս ենթաբաժնից: **Առաջին ենթաբաժնում ««Ադաբ» եզրույթի ստուգաբանությունը և նշանակությունը»**, ներկայացվել է «ադաբ» եզրույթի ծագումնաբանությունը հիմնվելով արաբ բառարանագիրների և հայտնի արևելագետներ Կ.Ֆոլլերսի<sup>34</sup> և Շ.Պելլայի<sup>35</sup> մոտեցումների ու դիտարկումների վրա: Այնուհետև ներկայացվել է «ադաբ» եզրույթի պատմական զարգացումը: Հիմնվելով Ս.Բոնեբակերի<sup>36</sup>, Ֆ.Գաբրիելի<sup>37</sup>, Ի.Լապիդուսի<sup>38</sup>, Գ.Բոուերինգի<sup>39</sup>, Դ.Ֆրոլովի<sup>40</sup>, Տ.Խալիդի<sup>41</sup> ուսումնասիրությունների և դիտարկումների վրա եկել ենք եզրահանգման, որ ադաբը հայեցակարգ է, որում արտացոլված է միջնադարյան արաբանուսումնական հասարակության արժեքային համակարգը, սոցիալ-մշակութային փորձը:

**Երկրորդ ենթաբաժնում՝ «Ադաբի գրականության խնդիրները և նպատակները»**, դիտարկվում են ադաբի գրականության առջև ծառայած

<sup>33</sup> Шидфар Б., Образная система арабской классической литературы, Наука, 1974, стр. 89

<sup>34</sup> Vollers K., Adab, Katalog der Islamischen, Christlich-Orientalischen, Jüdischen und Samaritanischen Handschriften der Universitäts-Bibliothek zu Leipzig, Leipzig, 1906, pg. 180

<sup>35</sup> Пелла Ш., Вариации на тему адаба, в кн. *Арабская средневековая культура и литература*, М., 1978, стр. 60

<sup>36</sup> Bonebakker S., Adab and the Concept of Belles-Lettres, *Abbasid Belles-Lettres*, Cambridge History of Arabic Literature, 1990, pg. 17

<sup>37</sup> Gabrieli F., Adab, *Encyclopaedia of Islam*, 1986, v. 1, pg. 175

<sup>38</sup> Lapidus I., Knowledge, Virtue and Action: the Classical Muslim Conception of Adab and the Nature of Religious Fulfillment in Islam, *Moral Conduct and Authority: The Place of Adab in South Asian Islam*, ed. by Metcalf B., University of California, 1984, pg 38-39

<sup>39</sup> Bowering G., The Adab Literature of Classical Sufism: Ansari's Code of Conduct, *Moral Conduct and Authority: The Place of Adab in South Asian Islam*, ed. by Metcalf B., University of California, 1984, pg. 66

<sup>40</sup> Фролов Д., Абу Хаййан ат-Таухиду, Диалоги (из «Книги услады и развлечений»), Восток-Запад, Исследования, Публикации, Наука, 1988, стр. 44

<sup>41</sup> Khalidi T., Times Literary Supplement, No. 5061, March 31, 2000, pg. 8



խնդիրները, դրանց իրագործման համար կիրառված միջոցները և աղաբի գրականության բովանդակային ընդգրկումը: Աղաբի գրականության նպատակն է դաստիարակել բարոյական մուսուլման: Այն հետապնդում է խրատական և կրթական նպատակներ: Ներկայացնելով 'իլմ-գիտելիքի'<sup>42</sup> և աղաբի իմաստավորումներն ու տարբերությունները անդրադարձ է կատարվել նաև աղաբի գրականության և գիտական գրականության հետապնդած նպատակներին և տարբերություններին: Հաշվի առնելով աղաբի գրականության ստեղծագործությունների բովանդակային ընդգրկումը և ձևական առանձնահատկությունները այն կարելի է որակել որպես գրականության տեսակ, որն իր նպատակների համար օգտագործում էր ժանրային տարբեր պատկանելության ստեղծագործություններ:

**Երրորդ ենթաբաժնում «Աղիբը որպես արաբամուսուլմանական մշակույթի գործիչ»**, ներկայացվել է արաբամուսուլմանական մշակութային կյանքի զարգացումների արդյունքում ասպարեզ եկած աղիբը աղաբի համակարգի գիտելիքների կրողը, ով պետք է ոչ միայն տիրապետեր այդ գիտելիքներին, այլ նաև սովորեցներ դրանք և փոխանցեր սերունդներին աղաբի գրականության ստեղծագործությունների ձևով: Աղիբին համեմատում են լրագրողի հետ<sup>43</sup>, անվանում են ջենթլմեն-գիտնական<sup>44</sup>, մուսուլման մտավորական<sup>45</sup>, աղաբը կիրառող և սովորեցնող<sup>46</sup>, կիրթ և ուսյալ մարդ, հանրագիտարանային գիտելիքների տեր մարդ, ինչպես նաև litterateur<sup>47</sup> գրականագետ, գրող: Աղիբի նպատակները, դերն ու գործառնություններն առավել խորը հասկանալու համար անդրադարձել ենք նաև մշակութային կյանքի մյուս կարևորագույն դեմքին՝ գիտնական-պիմին:

**Չորրորդ ենթաբաժնում «Աղաբի գրականության հեղինակները և նրանց ստեղծագործությունները»**, աղաբի գրականության բնույթն ու էությունը հասկանալու համար անհրաժեշտ ենք համարել ներկայացնել այն հեղինակներին, ովքեր կանգնած են եղել այդ գրականության ստեղծման ակունքներում համառոտ ներկայացնելով նրանց ստեղծագործությունները: Դա էր թելադրում նաև նյութի տրամաբանությունը, քանի որ իբն Աբդ Ռաբբիհին նրանց թողած ժառանգության կրողը և գործունեության շարունակողն է: Բացի դրանից աղաբի այդ աշխատությունները աղբյուր և մոդել են ծառայել իբն Աբդ Ռաբբիհիի համար: Աղաբի գրականության ստեղծագործությունների դիտարկման արդյունքում առանձնացրել ենք դրանցում առկա մի շարք ընդհանուր գծեր:

#### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

<sup>42</sup> 'Իլմը կրոնական իմաստով Աստծո ուղղորդումն է ճիշտ ապրելակերպի համար: Lapidus I., նշվ. աշխ., էջ 39-40

<sup>43</sup> Мец А., Мусульманский Ренессанс, М., 1966, стр. 144

<sup>44</sup> Khalidi T., Arabic Historical Thought in the Classical Period, Cambridge, 1994, pg.83

<sup>45</sup> Фильштинский И., История арабской литературы 10-18 вв., М., 1991, стр. 343

<sup>46</sup> Allen R., An Introduction to Arabic Literature, Cambridge, 2000, pg 2

<sup>47</sup> Kraeme J., Philosophy in the Renaissance of Islam: Abu Sulayman Al-Sijistani and His Circle, Leiden, 1986, pg. x

**Երկրորդ գլուխը** բաղկացած է ութ բաժնից: **Առաջին բաժնում՝ «Իբն Աբդ Ռաբբիհիի կյանքը և ստեղծագործությունը»**, ներկայացվել է Անդալուսի Օմայանների արքունական ծներգու և խոսնակ իբն Աբդ Ռաբբիհիի կենսագրությունը: Անդրադարձ է կատարվել մի շարք իրողությունների, որոնք օգնել են բացահայտել Անդալուսի ինտելեկտուալ կյանքում տեղի ունեցող գործընթացների շրջանակը, որի սահմանների մեջ պետք է տեղավորվեր իշխող հարստությանը ծառայող իբն Աբդ Ռաբբիհիի գործունեությունը: Անդրադարձ է կատարվել նրա բանաստեղծական ժառանգությանը ուշադրություն հրավիրելով այն հանգամանքին, որ ստեղծագործելով Մաշրիկի ավանդույթի շրջանակներում, իբն Աբդ Ռաբբիհին դիմել է նաև պոեզիայի ժողովրդական ձևերին:

**Երկրորդ բաժնում «Ալ-Իկդի» ստեղծման առանցքային դրոշմատմանները**, ներկայացվել է, թե ինչ ժամանակահատվածում է հեղինակը գրել և ավարտել «Ալ-Իկդը» դիտարկելով պատմաշխարհագրական և ժամանակային, ինչպես նաև Անդալուսի Օմայանների օրոք ստեղծված քաղաքական և մշակութային այն իրողությունները, որոնք դրոշել են իբն Աբդ Ռաբբիհիին ստեղծել այն:

**Երրորդ բաժնում ««Չեղինակ» հասկացության խնդիրը միջնադարյան արաբական գրականությունում»**, դիտարկել ենք միջնադարյան արաբական գրականության մեջ հեղինակի և ստեղծագործության վերաբերյալ միջնադարյան արաբամուսուլմանական գրական-գիտական մտքի պատկերացումները, ինչպես նաև Միջնադարի գրականության մեջ դրանց վերաբերյալ ակադեմիական մոտեցումները հիմնվելով Ա.Վեսելովսկիի<sup>48</sup>, Յ.Լոտմանի<sup>49</sup> և Դ.Լիխաչովի<sup>50</sup> ուսումնասիրությունների վրա: Այդ մոտեցումների համադրումը հնարավորություն է տվել առավել ճիշտ լուսաբանել հետազոտվող տեքստը համապատասխան եզրակացություններ անելով միջնադարյան արաբական գրականության բնույթի մասին, որտեղ իշխում էր նախնիների նկատմամբ պաշտամունքի և բացարձակ հեղինակության սկզբունքը:

**Չորրորդ բաժնում «Ալ-Իկդի» համար աղբյուր ծառայած հիմնական ստեղծագործությունները**, ներկայացվել են այն ստեղծագործությունները, որնք աղբյուր են ծառայել «Ալ-Իկդի» համար: Քանի որ ուսումնասիրողներն ընդգծում են, որ «Ալ-Իկդի» վրա մեծ ազդեցություն են թողել ալ-Մուբառադի (826-898) «Al-Kāmil fi-l-luġa wa-l-'adab»-ը («Լեզվի և աղաբի ամբողջական գիրքը»), ալ-Ջահիզի (775-868) «Kitāb al-bayān wa-l-tabyīn»-ը («Պերճախոսության և ծարտասանության գիրքը»), իբն Կուբեյբայի (828-889) «'Uyūn al-'ahbār»-ը («Տեղեկությունների աղբյուրներ»), հատկապես շեշտը դնելով վերջինի վրա, ապա դիտարկել ենք այդ երեք ստեղծագործությունների կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունները, աղբյուրներից մեջբերելով համապատասխան

<sup>48</sup> Веселовский А., Историческая поэтика, М., 1989

<sup>49</sup> Лотман Ю., Структура художественного текста, М., 1970

<sup>50</sup> Лихачев Д., Текстология. На материале русской литературы 10-17 вв., М.-Л., 1962, Лихачев Д., Поэтика древнерусской литературы, М., 1979



հատվածներ, առավել ընդարձակ անդրադառնալով «Սյուն ալ-Բար»-ին: Ներկայացվել են «Ալ-Իկդի» և այդ ստեղծագործությունների միջև առկա կառուցվածքային և բովանդակային տարբերությունները և նմանությունները:

**Հիմնգերոդ բաժնում «Ալ-Իկդի» տեքստաբանական առանձնահատկությունները»,** անդրադարձ է կատարվել «Ալ-Իկդին» որպես բանաստեղծություններով լուսաբանված խաբարային տեքստ, որում կուտակվում էր նախնիների փորձը, ինֆորմացիան արտառոց երևույթների մասին: Անդրադարձ է կատարվել իսնադին, որն այն անձանց անունների շղթան է, որոնք հաղորդում են տվյալ տեղեկությունը խաբարը, ներկայացվել է իսնադի դերն ու նշանակությունը ինֆորմացիայի փոխանցման բանավոր և գրավոր ձևերի պարագաներում: Հեղինակը տեքստում տեղ է խնայողների մեծ մասը, ինչը լուսաբանել ենք ինֆորմացիայի փոխանցման գրային ձևին անցնելու հանգամանքով: Անդրադարձ է կատարվել նաև այն խնդրին, թե, զանազան աղբյուրներից օգտվելիս, ինչ նկատառումներով է առաջնորդվել նյութը մշակելիս կամ կրճատումներ կատարելիս, մշակման արդյունքում ինչպիսի փոփոխություններ է կրել տեքստը և արդյունքում ինչ ձևով է գրանցվել «Ալ-Իկդում»: Տեքստի ստեղծման տեսանկյունից ժամանակային և տարածական, ինչպես նաև մշակութային գործոնների հաշվի առնումը հնարավորություն են տվել հասկանալ հեղինակի դիրքորոշումը. ինչպես է նա յուրացրել և իմաստավորել «նախորդների կատարած ընտրությունից իր ընտրած նյութը»:

**Վեցերոդ բաժնում «Ալ-Իկդի» կառուցվածքային վերլուծությունը»,** ներկայացվել է գրքի կառուցվածքը: Այն բաժանված է 25 գլուխների: Յուրաքանչյուր գլուխ հեղինակն անվանել է թանկարժեք քարի անունով: Յուրաքանչյուր քարից ընտրված է երկուական, որոնք տեղադրված են կենտրոնական զույգ չունեցող քարի երկու կողմերից կազմելով վզնոց: Նախ փորձել ենք հասկանալ, թե ինչու է ստեղծագործությունը թանկարժեք քարերից կազմված գարդի անուն կրում: Այդ խնդիրը լուսաբանելու համար անդրադարձել ենք նախախլամական Արաբիայի մշակույթում, ինչպես նաև այլ մշակույթներում տարածված քարի պաշտամունքին և դրա խորհրդանիշներին: Քար-գլուխների քանակը (25 գլուխ) և վզնոցում հիշատակված քարերի տեսակների քանակը (քանի որ վզնոցում կենտրոնական քարը զույգ չունի, ստացվում է 13 տեսակի քար) լուսաբանելու համար անդրադարձել ենք Ղուրանում հանդիպող քարի թեմային և դրա հիշատակումների հաճախականությանը<sup>51</sup>: Կառուցվածքի սիմետրիկությունը և կարգավորվածությունը փորձել ենք լուսաբանել միջնադարյան արաբանուսուլմանական մշակույթի տարբեր ոլորտներին բնորոշ կանոնակարգվածությամբ և ներդաշնակությամբ, որոնք բխում էին հելլենիստական փիլիսոփայությունից յուրացրած ռացիոնալիզմի սկզբունքներից<sup>52</sup>:

<sup>51</sup> Фролов Д., Семантика мотива камня в Коране, в кн. *Семантика образа в литературах Востока.*, М., 1998, стр. 102-120

<sup>52</sup> Шидфар Б., Образная система арабской классической литературы, Наука, 1974, стр. 87

**Յոթերոդ բաժնում «Ալ-Իկդի» բովանդակային վերլուծությունը»,** ներկայացվել է աշխատության բովանդակային ընդգրկումը, բացատրվել է թեմաների ընտրությունը ելնելով հեղինակի առջև ծառայած խնդիրներից և նրա հետապնդած նպատակներից: Մեջբերելով յուրաքանչյուր գլխից համապատասխան հատվածներ ներկայացվել են գրքի գլուխների բովանդակությունը. փորձ է կատարվել բացատրել նույն քարի անունը կրող երկու գլուխների միջև կապը:

**Ութերոդ բաժնում «Իբն Աբդ Ռաբբիհի «Ալ-Իկդը» աղաթի գրականության համատեքստում»,** ուսումնասիրելով աշխատության կառուցվածքը և բովանդակությունը, ինչպես նաև տեքստաբանական առանձնահատկությունները, առանձնացրել ենք այն հիմնական սկզբունքները, որոնք միասին գատում են տվյալ ստեղծագործությունը նախկինում գրված նմանատիպ այլ ստեղծագործություններից:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ  
«ԱԼ-ԻԿԴԻ» «ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԱԴԱԲԻ ՄԱՍԻՆ» ԳԼՈՒԽԸ ՈՐՊԵՍ  
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐԱԲԱՄՈՒԲՈՒՄՆԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՕՐԻՆԱԿ

**Երրորդ գլուխը** բաղկացած է 3 բաժնից: **Առաջին ենթաբաժնում «Գիտելիք» հասկացությունը միջնադարյան իսլամում»,** ներկայացվել է գիտելիքի իմաստն ու բովանդակությունը, առանցքային կարևորությունն իսլամում: Քանի որ «կրոնի զարգացման արդյունքում գիտելիքը դառնում է հաղիսի և բնդհանրապես կրոնական գիտության գրեթե հոմանիշը»<sup>53</sup>, այս դիտարկումը հաշվի ենք առել «Ալ-Իկդում»՝ իլմ-գիտելիքի բովանդակությունը հասկանալու, արժարժված գաղափարները ծիշտ ընկալելու և ըմբռնելու համար:

**Երկրորդ բաժնը «Գիտելիքի և աղաթի մասին» գլուխը՝ որպես իդեալական հասարակության մոդել»,** բաղկացած է 9 ենթաբաժնից: Նախքան ենթաբաժնիներին անցնելը գիտելիքը և աղաթը ներկայացվել են որպես միմյանց հետ փոխկապակցված հասկացություններ, «որոնց շուրջ պտտվում են կրոնը և աշխարհը»: Առանձնացվել են տվյալ գլխում արժարժված թեմաները և դրանց ծավալները հակիրճ ներկայացնելով դրանց դերը և նշանակությունը մուսուլմանական արժեհամակարգում և միմյանց հետ կապը:

**Առաջին ենթաբաժնում «Գիտելիքի տեսակները»,** ներկայացվել են մուսուլման գիտնականների կողմից գիտությունների դասակարգումը և դրա սկզբունքները: Ներկայացվել է Իբն Աբդ Ռաբբիհի կողմից գիտելիքների դասակարգումը հիմնվելով Ղուրանի տողերի և Սուլհամմադ մարգարեի խոսքերի վրա: Մեջբերելով համապատասխան հատվածներ տեքստից տվյալ ենթագլխում արժարժված գաղափարների հիման վրա առանձնացրել ենք գիտելիքին վերաբերող դրույթներ և մեկնաբանել դրանք:

**Երկրորդ ենթաբաժնում «Բանականություն»,** տեքստից մեջբերելով համապատասխան հատվածներ բանականությունը ներկայացվել է որպես

<sup>53</sup> Роузентал Ф., Торжество знания, М., 1978, стр. 257



ճանաչողության և իսլամի բարոյաէթիկական սկզբունքներին և իդեալներին համապատասխան մարդու դաստիարակման միջոց: Ներկայացվել է բանականության և աղաքի անբակտելի կապը: Այս հարցը լուսաբանելու համար ներկայացվել են միջնադարյան այլ հեղինակների իբն ալ-Մուկաֆֆայի, ալ-Մավարդիի, Սալիի իբն Ջանահի մոտեցումները մեջբերելով համապատասխան հատվածներ նրանց ստեղծագործություններից:

**Երրորդ ենթաբաժնում «Իմաստություն»**, ներկայացվել է «իմաստություն» հասկացության դերն ու նշանակությունն իսլամում և իբն Աբդ Ռաբբիհի կողմից դրա իմաստավորումը որպես ճիշտ գործողությանը տանող մուսուլմանական էթիկայից բխող օգտակար գիտելիք: Ներկայացվել են նաև հեղինակի կողմից ուրվագծված այդ գիտելիքի սահմանները: Բերված են համապատասխան մեջբերումներ տեքստից:

**Չորրորդ ենթաբաժնում «Ճարտասանություն»**, ներկայացվել է ճարտասանության դերն ու նշանակությունն իսլամում անդադարձ կատարելով արարերենի ճարտասանությանը նվիրված ամենահայտնի աշխատություններից մեկին ալ-Ջահիզի «Պերճախոսության և ճարտասանության գրքին» («Kitāb al-bayān wa-l-tabyīn»), և ներկայացվել է իբն Աբդ Ռաբբիհի կողմից ճարտասանության իմաստավորումը: Մեջ են բերվել հատվածներ տեքստից:

**Հինգերորդ ենթաբաժնում «Մուռուվա»<sup>54</sup>** ներկայացվել է մուռուվայի դերն ու նշանակությունը նախաիսլամական շրջանում, ինչ փոփոխություններ է կրել այդ արժեհամակարգն իսլամում, ինչպես է իմաստավորում իբն Աբդ Ռաբբիհին իսլամի բարոյական իդեալները և մուռուվայի իդեալները: Տեքստից մեջբերված են համապատասխան հատվածներ:

**Վեցերորդ ենթաբաժնում «Արաբամուսուլմանական հասարակության հիմնական բարոյական դրույթները»**, իսլամի լույսի ներքո ներկայացված են «էթիկա», «վարքուբարք», «լավ հատկանիշներ» նշանակող اخلاق / 'ahlāq և محاسن / mahāsīn հասկացությունների մեջ մտնող այն արժանիքները, որոնցով պետք է օժտված լինի իդեալական մուսուլմանը հակադրելով դրանք դեպի բարոյալքում և այլատրում տանող նախատելի հատկանիշներին: Մեջբերված են համապատասխան հատվածներ տեքստից:

**Յոթերորդ ենթաբաժնում «Ալլահի աղաբը մարգարեի համար: Մարգարեի աղաբը մուսուլմանական համայնքի համար»**, ընդգծվել է Մուհամմադի աղաբի լավագույն կրող լինելը: Աղաբն արժանապատիվ

<sup>54</sup> Նախաիսլամական շրջանում մարդու բեղվինական իդեալը մարմնավորում էր մուռուվայի հատկանիշների կրողը, արժեհամակարգ ընդգրկող «խիզախություն», «մեծահոգություն», «հոգու տոկունություն», «առատածեռություն», «հավատարմություն ցեղի ավանդույթներին» հասկացությունները: Այս սոցիալական հատկանիշները բոլորը միասին ապահովում էին տոհմային հասարակության գոյատևումը, նրա կենսաբանական և սոցիալական վերարտադրությունը: Грязневич П., Развитие исторического сознания арабов (5-8 вв.), в кн. *Очерки истории арабской культуры 5-15 вв.*, М., 1982, стр. 113

վարքագիծ և կատարյալ վարքուբարք է, որը մարգարեի համար Ալլահը ներկայացրել է Մուրբ Գրքում: Մուհամմադը մուսուլմանական բարոյականության մարմնավորումն է և պետք է օրինակ ծառայի հավատացյալների համար: Մարգարեն իր հերթին կրթում է նրանց այն արժեքների համաձայն, որոնք որպես պատվիրան ստացել է Ալլահից:

**Ութերորդ ենթաբաժնում «Իմաստունների և գիտնականների խոսքերն աղաբի արժանիքների մասին»**, ընտրել և ներկայացրել ենք խնդրին վերաբերող լավագույն օրինակները և մեկնաբանել ենք դրանք:

**Իններորդ ենթաբաժնում «Մարդկանց դասերի և աղաբի գրականության սոցիալական կողմնորոշման մասին»**, անդադարձ է կատարվել իսլամի արժեքային համակարգի առանցքային գաղափարներից մեկի մարդկանց հավասարության և սոցիալական հիերարխիայի բացակայությանը, միջնադարյան արաբամուսուլմանական հասարակության դասերին, իբն Աբդ Ռաբբիհի կողմից մարդկանց դասերի բաժանման սկզբունքներին, ինչպես նաև հեղինակի մի շարք մտքերից բխող աղաբի սոցիալական կողմնորոշմանը:

**Երրորդ բաժնում ««Գիտելիքի և աղաբի մասին» գլխում աղբյուր հանդիսացող տեղեկություններ փոխանցողները»**, թվարկվել են խաբարների մասամբ պահպանված իսնադներում տեղեկություններ փոխանցողների անունները և ներկայացվել է նրանց անունների հիշատակման հաճախականությունը, և գիտության այն բնագավառը, որում գործել են նրանք լիարժեք պատկերացում կազմելու համար, թե ինչպիսի գիտելիքների վրա է հիմնվել հեղինակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտության արդյունքները հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

1. Արաբների համար, որոնք ընկալում էին Բաղդադը որպես մշակութային կենտրոն, անդալուսյան մշակույթը դիտարկվում էր որպես արաբամուսուլմանական ընդհանուր մշակույթի մի մաս: Մաշրիկից Անդալուս եկած գիտնականներն իրենց հետ բերում են Մաշրիկի գրական ժառանգությունը և ավանդույթը, որը ժամանակի ընթացքում հաստատվում և ամրապնդվում է Անդալուսում: Անդալուսյան գրականությունը ձևավորվում է Մաշրիկի ավանդույթի ազդեցության ներքո, ինչը զգացվում էր և՛ պոեզիայում, և՛ արձակում:

2. Իբն Աբդ Ռաբբիհին արաբամուսուլմանական մշակույթի վերելքի ժամանակ ձևավորված և միջնադարյան արաբական գրականությունում լայն տարածում ստացած աղաբի գրականության կարևորագույն ներկայացուցիչներից է:

3. «Ալ-Իկոն» աղաբի գրականության օրինակ է հանրագիտարանային ընդգրկմամբ: «Ալ-Իկոն» հեղինակը հավաքել է ավանդույթը կազմող գիտելիքները, այն այլ աղբյուրներից հավաքված և կազմված տեքստ է: Սեփական աշխատության մեջ այլ աշխատություններից հատվածներ ընդգրկելը գրական կանոն էր: Հետևելով արաբամուսուլմանական մշակույթով միավորված երկրներում գոյություն



ունեցող միասնական գրական ավանդույթին և կանոնին, որտեղ իշխում էր նախնիների նկատմամբ պաշտամունքի և բացարձակ հեղինակության սկզբունքը, իբն Արդ Ռաբբիին կրկնել է սակրալ դարձած կամ հեղինակավոր տեքստերը:

4. Չնայած իբն Արդ Ռաբբիին կրել է նախորդ հեղինակների ազդեցությունը և ձգտել է մնալ ավանդույթի շրջանակներում, «Ալ-Իկոն» ինքնուրույն գործ է: Հիմնվելով իրեն նախորդած հեղինակների աշխատությունների և նրանց փորձի վրա իբն Արդ Ռաբբիին այնուամենայնիվ եզակի գործ է ստեղծում, որը տարբերվում է իր մասշտաբներով, նյութի մանրակրկիտ ընտրությամբ և կանոնակարգված կառուցվածքով: Հեղինակը ձգտել է «Ալ-Իկոն» արտացոլել նախնիների գրեթե ամբողջ պատմաձևակութային և հոգևոր ժառանգությունը:

5. Եթե 8-րդ դարի 20-ական թվականներից սկսվում է բանավոր փոխանցվող ավանդույթը գրի առնելու ժամանակաշրջանը, որը նույն դարում համայնվում է պարսկերենից և հունարենից կատարված թարգմանություններով, ապա 8-րդ դարի երկրորդ կեսից սկսվում է կուտակված նյութից ծաղկաբաղ անելու փուլը: Իբն Արդ Ռաբբիին էլ իր հերթին նախորդ հեղինակների կողմից ընտրված նյութից ընտրություն է կատարել իր ստեղծագործության մեջ ձգտելով կենտրոնացնել աղաբի լավագույնն ու ընտրանին, այն, ինչը համարել է կարևորագույնը արաբամուսուլմանական հասարակության սոցիալ-մշակութային փորձի, բարոյաէթիկական նորմերի, սոցիալական վարքագծի, ավանդույթների փոխանցման համակարգում: Մշակութային ֆունդի փոխանցմանը և դրա առավելագույն յուրացմանը նպաստում է ամենից տպավորիչ օրինակների և տեղեկությունների շեշտումը: Կազմելով իր աշխատությունը իբն Արդ Ռաբբիին ընտրել է առավել հայտնի և հիշարժան նմուշները: Նա նաև դիմել է կրկնությունների, որպեսզի լսողի գիտակցության մեջ ինֆորմացիան առավելագույնս տպավորվի, ինչպես նաև ընդգծվի դրա առավել կարևոր լինելը:

6. «Ալ-Իկոն» իրենից ներկայացնում է խաբարային տեքստ լուսաբանված բանաստեղծություններով: Դեռ 8-րդ դարից նկատվում է բանաստեղծական և խաբարային նյութերի խնամողի սղման միտումը՝ կապված ինֆորմացիայի փոխանցման գրավոր ձևին անցնելու հետ: Իբն Արդ Ռաբբիին սղում է խաբարների մեծ մասի խնամները, քանի որ հաղորդողի անունն արդեն հայտնի է ձգտելով լակոնիկության: Նա ընդգրկում է «Ալ-Իկոն» «նախնիների չքնաղ խոսքերից և մտքերի մարգարիտներից լավագույնները», ինչը ենթադրում է, որ դրանք ամենից ճանաչվածն ու լայն տարածում գտածն են, հետևաբար փոխանցողներն էլ բոլորին հայտնի են: Այդ խաբարների մեջ կան նաև առակներ և իմաստություններ, որոնց պարագայում խնամողի առկայությունը կամ բացակայությունը դեր չի խաղում: Երկխոսությունն ընտրելով որպես շարադրանքի հիմնական ձև հեղինակն ապահովում է հաղորդվող տեղեկության հավաստիությունը: Երկխոսությունը հղում է, ինչը երաշխավորում է այդ տեղեկության վավերականությունը:

7. Իբն Արդ Ռաբբիին «Ալ-Իկոն» խաբարներն ընդգրկել է աղբյուրների համադրման ու համեմատության, խաբարների խիստ ընտրության և մշակման արդյունքում՝ հիմնվելով իր սեփական

տեսակետների և դատողությունների, մոտեցումների և ճաշակի վրա: Նա աղբյուրների տեքստերից շատ հաճախ ոչ թե մեխանիկորեն հատվածներ է տեղափոխել իր աշխատության մեջ, այլ մշակման է ենթարկել դրանք կամ կրճատումներ կատարել ֆիքսելով այն, ինչ առավել անհրաժեշտ է համարել: Ընդ որում տեքստը ոչ միայն ենթարկվել է ոճաբանական, ձևաբանական մշակման, այլ երբեմն նաև իմաստային փոփոխությունների:

8. Իբն Արդ Ռաբբիին աղիբի հայացքով և աղիբի դիրքից է դիտել և ուսումնասիրել այն նյութը, որն ընդգրկել է իր գրքի մեջ: Նա փնտրել և ընդգրկել է այն գաղափարները, որոնք անհրաժեշտ է համարել իր նպատակների համար, և որոնք կարող էին ծառայել աղաբի հայեցակարգին և ամբողջական կդարձնեին իր միտքը: Ընտրելով խաբարներ նա ստեղծագործության մեջ ընդգրկել է այնպիսիները, որոնց մի մասի վավերականությունը կասկածի տակ էր դրվում գիտական շրջանակների կողմից:

9. Իբն Արդ Ռաբբիին նպատակն հասարակության մոդել ձևավորելն է հիմնված մուսուլմանական էթիկայի և բարոյականության վրա, ինչի համար անհրաժեշտ է վերացնել այնտեղ առկա քայքայիչ երևույթները, և դրա հիմքում ընկած է մուսուլմանական հասարակության կրոնական ուսմունքը, որը վեհ բարոյական արժեքներ է քարոզում և կոչ է անում առաջնորդվել դրանցով սոցիալական հարաբերություններում: Իբն Արդ Ռաբբիին պայքարում է հասարակության բարոյալքման և տգիտության դեմ: Մերկացնելով հասարակության արատները՝ նա ցանկանում է բարելավել բարքերը:

10. Մուսուլմանական էթիկայի հիմնադրույթներից է միմյանց հետ փոխկապակցված գիտելիքի և աղաբի զուգակցումը, որոնք կապված են հասարակական կյանքի հոգևոր և աշխարհիկ կողմերի հետ: «Ալ-Իկոն»՝ «im-գիտելիքը, որը չափազանց առանցքային նշանակություն ունի իսլամում, ներկայացված է որպես աղաբի հիմք: Ներկայացնելով հասարակական կյանքի հոգևոր և աշխարհիկ կողմերը իբն Արդ Ռաբբիին գերակայող դիրք է հատկացրել հոգևորին: Հեղինակը պատկերել է արաբամուսուլմանական հասարակության բարոյական նորմերի համակարգը բխեցնելով այն կրոնական ուսմունքից: «Ալ-Իկոն» կրոնական ոլորտի գաղափարները, ազատվելով կրոնական վեղարներից, «աշխարհիկացվում» են, ծառայեցվում են աղաբին: Այն բոլոր հատկանիշների ամբողջությունը, որոնք բնորոշվում են որպես «Ալլահի ճանապարհով գնալ», ծառայեցվում են իդեալական հասարակության մոդելի ձևավորմանը, որում ամեն տարր ունի իր տեղն ու գործառնությունը, պրոցեսները գտնվում են տրամաբանական և պատճառահետևանքային կապի մեջ: Իբն Արդ Ռաբբիին վեր է հանում այն բարոյական և սոցիալական նորմերը, որոնց հիման վրա տեղի է ունենում անձի սոցիալականացումը, և ներկայացնում է աշխարհիկ հարաբերությունների հաստատված նորմերը:

11. «Ալ-Իկոն» իրենից ներկայացնում է ունիվերսալ մի գիրք, որում ընդգրկված են աղաբի հայեցակարգով ենթադրվող արաբամուսուլմանական մշակույթի բաղադրիչներին, կրթության և դաստիարակության համամշակութային ֆունդի հիմքերին ծանոթացնող գրեթե բոլոր գիտելիքները «Ալ-Իկոն» դարձնելով իմաստությունների



շտեմարան: Իբն Արդ Ռաբբիհիի կարծիքով աղաբի նպատակն ավանդույթը կազմող գիտելիքների փոխանցումը և դրանց հիման վրա մարդու կատարելագործումն է:

### ՀԱՎԵԼՎԱԾ

Հավելվածում ներկայացված են հատվածային թարգմանություններ տեքստից:

### ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. «Աղաբի գրականության ձևավորումը, խնդիրները և նպատակները»: - Արաբագիտական ուսումնասիրություններ: Հոդվածների ժողովածու: Հատոր Ե: Երևան-Վան Արյան, 2011, էջ 10-16

2. «Իբն Արդ Ռաբբիհիի «Բացառիկ վզնոցը» որպես աղաբի գրականության օրինակ»: - Արաբագիտական ուսումնասիրություններ: Հոդվածների ժողովածու: Հատոր Ե: Երևան-Վան Արյան, 2011, էջ 17-28,

3. «Իբն Արդ Ռաբբիհիի «Բացառիկ վզնոց» ստեղծագործության «Գիտելիք և աղաբ» գլուխը որպես միջնադարյան արաբամուսուլմանական արժեհամակարգի օրինակ»: - Արևելագիտության հարցեր: Գիտական հոդվածների պարբերական ժողովածու N 8, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 103-115

### ТАТЕВИК ГАГИКОВНА ГАРИБЯН

### “УНИКАЛЬНОЕ ОЖЕРЕЛЬЕ” ИБН АБД РАББИХИ КАК ПАМЯТНИК СРЕДНЕВЕКОВОЙ АРАБО-МУСУЛЬМАНСКОЙ ПИСЬМЕННОЙ КУЛЬТУРЫ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.07 – “Зарубежная литература”. Защита диссертации состоится 20-го марта 2015 г. в 14:00 часов на заседании специализированного совета 003 “Армянской и зарубежной литературы” ВАК РА действующего в Институте литературы имени М.Абегяна НАН РА, по адресу г.Ереван, ул. Г.Лусаворич 15.

### Резюме

Диссертация посвящена исследованию одного из важных источников средневековой арабо-мусульманской культуры – “Уникальному ожерелью” Ибн Абд Раббихи в контексте анализа структуры, содержания и выявления основных текстологических особенностей источника, а также выявления причин и мотивов создания работы, с описанием той исторической, временной и культурной среды, в рамках которой была создана работа. Один из видных деятелей андалусской культуры Ибн Абд Раббихи является ярким представителем литературы адаба, которая была широко распространена в средневековой арабской литературе. Литература адаба определяла для мусульманина круг необходимых знаний, которые делали его культурным и образованным. “Уникальное ожерелье” – капитальный труд по литературе адаба. Ибн Абд Раббихи отобрал из уже отобранного предшественниками материала и включил в свой труд лучшее, что посчитал наиболее важным в системе передачи традиций, норм социального поведения, этических норм, а также исторического опыта арабо-мусульманского общества.

Работа состоит из введения, трех глав, выводов и списка использованной литературы.

В **введении** обоснована актуальность работы, представлены основные цели и задачи, прикладное значение, хронологические рамки, методологические основы и научная новизна диссертации, дано краткое описание использованной литературы.

В **первой главе** – “Андалусская литература 9-10вв.” – дается общее представление об общественной, политической и культурной жизни одной из наиболее отдаленных областей Арабского Халифата – Андалузии, в частности периода жизни и творчества Ибн Абд Раббихи. Описаны формирование арабской литературы в Андалузии, основные этапы развития андалусской литературы и их особенности. Представлена жанровая система средневековой арабской литературы и место литературы адаба в ней. Описано историческое развитие термина



“адаб”, цели и задачи литературы адаба, которая противопоставлена научной литературе. Представлен адиб, как деятель арабо-мусульманской культуры, носитель знаний и ценностей, которые были включены в систему адаба. Рассматриваются произведения адаба, авторы которых стояли у истоков зарождения этой литературы и считались ее яркими представителями. Ибн Абд Раббихи являлся носителем их наследия.

Во второй главе – “Уникальное ожерелье” Ибн Абд Раббихи как пример литературы адаба” – рассмотрены те произведения, которые оказали наибольшее влияние на создание “Уникального ожерелья”, выявлены их структурные и содержательные различия. Осуществлен анализ структуры и содержания “Уникального ожерелья”, выявлены его текстологические особенности с учетом задач которые были поставлены перед автором и которые были обусловлены интеллектуальной сущностью эпохи. Одной из важных задач данного исследования является анализ проблемы авторства и принципов творчества в средневековой арабской литературе. Рассмотрение этих вопросов в литературе Средних веков позволяет лучше понять характер средневековой арабской литературы, где царил принцип абсолютного авторитета и почитания древних, а также более адекватно интерпретировать позицию автора. Несмотря на то, что Ибн Абд Раббихи старался оставаться в рамках традиции, “Уникальное ожерелье” –самостоятельное произведение, отличающееся от трудов других авторов своими композиционными, содержательными и текстологическими особенностями.

Третья глава – “Глава “Знания и адаба” “Уникального ожерелья” как пример арабо-мусульманской системы ценностей” – посвящена анализу содержания данной части произведения. Определены значения знания и адаба, которые сыграла важную роль в становлении арабо-мусульманской культуры. Представлены основополагающие ценностные категории средневекового арабо-мусульманского общества. Ибн Абд Раббихи превозносит знание и адаб, говоря, что это “два полюса, вокруг которых вращаются религия и мир”. Под знанием в первую очередь подразумевалось освоение исламской традиции, что охватывало знание Корана, преданий о пророке Мухаммеде, историю ислама, мусульманского права. Под адабом подразумевалась образованность светского характера, одной из важнейших составляющих которой являлась совокупность высоких моральных качеств. Подчеркивается принципиальное значение неразрывной связи знания и адаба, что позволяет сделать вывод о том, что у истоков адаба находится знание, как источник морального воспитания.

В заключении диссертации представлены выводы проделанной работы.

В приложении представлен перевод некоторых отрывков из текста.

**Ibn Abd Rabbihi's “The Unique Necklace” as a Monument of Medieval Arab-Islamic Written Culture**

**Dissertation to obtain the Candidate Degree of Philological Sciences with the Speciality of 10.01.07 - “Foreign Literature”.**

**The defence will take place on the 20 of March, at 14:00 o'clock, in the specialized Council 003 of “Armenian and Foreign Literature” at the Institute of Literature of National Academy of Science after M. Abeghyan. Adress: 15 Grigor Lusavorich, Yerevan**

**SUMMARY**

The disseretation is devoted to the study of one of the most significant sources of medieval Arab-Islamic culture “The Unique Necklace” by Ibn Abd Rabbihi in the context of structure and content analysis. It also presents the key textological features as well as the causes and motives of the creation of this literary piece with a description of its historic and cultural background.

One of the prominent figures of the Andalusian culture, Ibn Abd Rabbih is a bright representative of adab literature, which was widespread in the medieval Arabic literature. Adab literature was a source of necessary knowledge for a Muslim to become a well educated and civilised person. “The Unique Necklace” includes knowledge which comprised the traditions of Arab-Islamic civilization.

The dissertation consists of an Introduction, three chapters, Conclusion and bibliography.

**The Introduction** presents the relevance of the thesis and its scientific novelty, the major goals and objectives of the work and its methodological priniples, the chronological framework, practical value of the dissertation, the level of study of the material in Armenian, Russian, and European Arabic studies. It gives a brief description of the literature used.

**The firs chapter – “Andalusian Literature of the 9-10th centuries”**– gives a general review of public, political and cultural situation in one of the most remote regions of Arabic Caliphate - Andalusia, in particular, the period when Ibn Abd Rabbihi created his work. It describes the formation of Arabic literature in Andalusia, its major phases and characteristic features. It illustrates the genre system of medieval Arabic literature and the role of adab literature in it. It also describes the origin of the term “adab” and its historic evolution, the goals and objectives of adab literature as opposed to scientific literature. The chapter introduced adib as a representative of the Arab-Islamic culture and the advocate of knowledge and values which are incorporated into the adab system. The chapter also covers the works of other adab authors who were at the origin of that very literature and were



considered its most remarkable representatives. Ibn Abd Rabbihi is the bearer of their heritage.

**The second chapter – “Ibn Abd Rabbihi's “The Unique Necklace” as an example of adab literature”** – illustrates the life and oeuvre of Ibn Abd Rabbihi based on data taken from works by medieval authors. Taking into account the political situation in Andalusia, some acceptable framework of intellectual activity from the point of view of religion has been put forward which outlines the limits for Ibn Abd Rabbihi's creative work.

One of the central tasks of this research is to analyze issues related to the authorship in medieval Arabic literature. The study of these issues in literature of Medieval Ages enables to better understand the character of the medieval Arabic literature where principle of absolute authority and ancestor worship reigned, as well as to interpret the author's position more adequately. Ibn Abd Rabbihi has experienced the impact of his predecessors and tried to keep to traditions. Nevertheless, “The Unique Necklace” is a unique work different from those of other authors in compositional, content and textological manifestation. Ibn Abd Rabbihi had selected the best from the already selected material by his predecessors what he considered to be the most significant in the system of transfer of traditions, norms of social behaviour, ethical norms, and historical experience of the Arab-Islamic society.

The works which had a greater impact on the creation of “The Unique Necklace” have been considered from the point of view of their structural and contentual differences. Textological peculiarities of “The Unique Necklace” have been pointed out. Based on the analysis of its structure and content, the principles of its creation have been pointed out which make this work unique.

**The third chapter – “The Book on “Knowledge and Adab” of “The Unique Necklace” as an example of Arab-Islamic value system”** – deals with the analysis of the content of the chapter on knowledge and adab. The significance of knowledge and adab, which played an important role in the formation of the Arab-Islamic culture, has been defined. Besides, fundamental value categories of medieval Arab-Islamic society are reviewed. Ibn Abd Rabbihi extols the virtue of knowledge and Adab saying that they are ‘two poles around which religion and world rotate’. Islamic tradition, which covered the knowledge of the Quran, legends about Profit Muhammad, the history of Islam, Muslim laws, was meant by saying knowledge. The secular education was meant by saying adab one of the main features of which was the combination of high moral values. The principle significance of the indissoluble connection of knowledge and adab is highlighted which enables to conclude that at the core of adab is knowledge as a source of moral education.

**Conclusion** presents the main findings of the work.

**Appendix** presents translations of several sections from the original text.

*D. M. M. M.*

*Հանրահայտ - Կրթական համայնք*



Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի տպարանում:  
Տպարանակ 50: